**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**
**ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության N 1035-Ն որոշումը առ 18.06.2020թ. և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 160.1 հոդվածը՝ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից սույն կանոնակարգի հավելվածում նշված մասնագիտություններով մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողները կարող են վերադարձնել ուսումնական տարվա ընթացքում աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված և վճարված եկամտային հարկը՝ ուսման համար վճարված գումարը չգերազանցող չափով:

1. Ծրագրի մասնակից կարող են հանդիսանալ միայն ՀՀ քաղաքացիները:
2. Ծրագրի շրջանակներում սովորողները կարող են ստանալ միայն մեկ մասնագիտություն:
3. Հիփոթեքային վարկավորման շրջանակներում եկամտային հարկի փոխհատուցում ստացող մագիստրոսները և ասպիրատները կարող են օգտվել միայն մեկ արտոնությունից (եկամտային հարկի վերադարձ կամ հիփոթեքային վարկավորման շրջանակներում, կամ նշված մասնագիտություններից որևէ մեկով ուսումնառության շրջանակներում):

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության N 1125-Ն որոշումը առ 03.07.2020թ.՝ սահմանվում է մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողների ուսման վարձի փոխհատուցման շրջանակներում եկամտային հարկի վերադարձի կարգը: Հարկային մարմին անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում (հարկային մարմնի կողմից սահմանված ձևանմուշով);
2. Սովորողի ՝ համալսարանի հետ կնքված պայմանագրի պատճենը;
3. Անձնագիր, սոցիալական քարտ;
4. Տեղեկանք համալսարանից՝ ռեկտորի ստորագրությամբ:

Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել հարկային մարմին ուսումնական տարվա ավարտից հետո՝ 3 ամսվա ընթացքում: Ուսումնական տարին հաջողությամբ ավարտած համարելու համար անհրաժեշտ բոլոր քննություններն ուսումնական տարվա ավարտից հետո հանձնելու դեպքում փաստաթղթերը հարկային մարմին են ներկայացվում ուսումնական տարվա ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Հարկային մարմնի կողմից դիմումի հաստատումից հետո գումարի վերադարձը կատարվում է սովորողի հաշվարկային հաշվին՝ 11 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՊՃՀ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հավելված**

1. *Մագիստրատուրայի մասնագիտությունների ցանկ, որոնց համար իրականացվում է եկամտային հարկի վերադարձ.*

| Դասիչը (ծածկագիրը) | Մասնագիտությունը | Որակավորումը |
|---|---|---|
| 01 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | |
| 011 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | |
| 011101.00.7 | Կրթական գիտություններ | Կրթության մագիստրոս |
| 011302.00.7 | Հատուկ մանկավարժություն | Մանկավարժության մագիստրոս |
| 02 ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏ | | |
| 021 ԱՐՎԵՍՏ | | |
| 021201.00.7 | Դիզայն | Արվեստի մագիստրոս |
| 021801.00.7 | Արվեստի տեսություն և պատմություն | Արվեստի տեսության և պատմության մագիստրոս |
| 03 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| 031 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| 031401.00.7 | Սոցիոլոգիա | Սոցիոլոգիայի մագիստրոս |
| 031501.00.7 | Մշակութաբանություն | Մշակութաբանության մագիստրոս |
| 05 ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ | | |
| 051 ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| 051101.00.7 | Կենսաբանություն | Կենսաբանության մագիստրոս |
| 051201.00.7 | Կենսաքիմիա | Կենսաբանության մագիստրոս |
| 051202.00.7 | Կենսաֆիզիկա | Կենսաբանության մագիստրոս |
| 052 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | | |
| 052101.00.7 | Շրջակա միջավայրի գիտություններ | Շրջակա միջավայրի մագիստրոս |
| 052201.00.7 | Բնապահպանություն և բնօգտագործում | Շրջակա միջավայրի մագիստրոս |
| 053 ՔԻՄԻԱ | | |

| | | |
|---|---|---|
| 053101.00.7 | Քիմիա | Քիմիայի մագիստրոս |
| 054 ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ | | |
| 054101.00.7 | Երկրաբանություն | Երկրաբանության մագիստրոս |
| 054201.00.7 | Աշխարհագրություն | Աշխարհագրության մագիստրոս |
| 055 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| 055101.00.7 | Ֆիզիկա | Ֆիզիկայի մագիստրոս |
| 055102.00.7 | Ռադիոֆիզիկա | Ֆիզիկայի մագիստրոս |
| 056 ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ | | |
| 056101.00.7 | Մաթեմատիկա | Մաթեմատիկայի մագիստրոս |
| 056201.00.7 | Վիճակագրություն | Վիճակագրության մագիստրոս |
| 056801.00.7 | Մեխանիկա | Մեխանիկայի մագիստրոս |
| 056802.00.7 | Ֆինանսական մաթեմատիկա | Ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս |
| 06 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ) | | |
| 061 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ) | | |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | Ինֆորմատիկայի մագիստրոս |
| 061102.00.7 | Ծրագրային ճարտարագիտություն | Ինֆորմատիկայի մագիստրոս |
| 061103.00.7 | Համակարգչային ճարտարագիտություն | Ինֆորմատիկայի մագիստրոս |
| 061104.00.7 | Տեղեկատվական համակարգեր | Ինֆորմատիկայի մագիստրոս |
| 061105.00.7 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | Ինֆորմատիկայի մագիստրոս |
| 061901.00.7 | Տեղեկատվական անվտանգություն | Տեղեկատվական անվտանգության մագիստրոս |
| 07 ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| 071 ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | |
| 071201.00.7 | Շրջակա միջավայրի պահպանություն | Ճարտարագիտության մագիստրոս |
| 071301.00.7 | Էներգետիկա | Ճարտարագիտության մագիստրոս |
| 072 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ | | |
| 0721 Պարենամթերքի տեխնոլոգիա | | |

| | | |
|---|---|---|
| 072101.00.7 | Պարենամթերքի տեխնոլոգիա | Տեխնոլոգիայի մագիստրոս |
| 073 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| 073101.00.7 | Ճարտարապետություն | Ճարտարապետության մագիստրոս |
| 073102.00.7 | Քաղաքային տնտեսություն | Ճարտարագիտության մագիստրոս |
| 073201.00.7 | Շինարարություն | Ճարտարագիտության մագիստրոս |
| 08 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ | | |
| 082 ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | | |
| 082101.00.7 | Անտառային տնտեսություն | Անտառային տնտեսության մագիստրոս |
| 09 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| 091 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | |
| 091601.00.7 | Ֆարմացիա | Ֆարմացիայի մագիստրոս |
| 092 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| 092301.00.7 | Սոցիալական աշխատանք | Սոցիալական աշխատանքի մագիստրոս |
| 10 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՍԵՐՎԻՍ) 101 ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| 101501.00.7 | Զբոսաշրջություն | Զբոսաշրջության մագիստրոս |

2. *Ասպիրանտուրայի մասնագիտությունների ցանկ, որոնց համար իրականացվում է եկամտային հարկի վերադարձ.*

| Թվանիշը | Գիտության բնագավառը, մասնագիտությունը | Աստիճանաշնորհման բնագավառը |
|---|---|---|
| Ա.00.00 | Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ | |
| Ա.01.00 | Մաթեմատիկա | |
| Ա.01.09 | Մաթեմատիկական կիբեռնետիկա և մաթեմատիկական տրամաբանություն | Ֆիզիկամաթեմատիկական |
| Ա.02.00 | Մեխանիկա | |
| Ա.02.01 | Տեսական մեխանիկա | Ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական |
| Ա.04.00 | Ֆիզիկա | |

| | | |
|---|---|---|
| Ա.04.03 | Ռադիոֆիզիկա | Ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական |
| Գ.00.00 | Կենսաբանական գիտություններ | |
| Գ.00.05 | Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա | Կենսաբանական |
| Գ.00.06 | Վիրուսաբանություն. իմունաբանություն | Կենսաբանական, բժշկական |
| Ե.00.00 | Տեխնիկական գիտություններ | |
| Ե.02.00 | Մեքենաշինություն և մեքենագիտություն | |
| Ե.02.02 | Ռոբոտներ, մեխատրոնիկա, ռոբոտատեխնիկական համակարգեր | Տեխնիկական |
| Ե.09.00 | Էլեկտրատեխնիկա | |
| Ե.09.01 | Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա, էլեկտրատեխնոլոգիաներ | Տեխնիկական |
| Ե.11.00 | Սարքաշինություն, չափագիտություն և ինֆորմացիոն չափիչ սարքեր | |
| Ե.11.17 | Բժշկական նշանակության սարքեր, համակարգեր, արտադրատեսակներ | Տեխնիկական |
| Ե.12.00 | Ռադիոտեխնիկա և կապ | |
| Ե.12.01 | Ռադիոտեխնիկա, ռադիոհաճախականային սարքավորումներ, համակարգեր, տեխնոլոգիաներ | Տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական |
| Ե.12.03 | Հեռահաղորդակցական ցանցեր, սարքավորումներ և համակարգեր | Տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական |
| Ե.13.00 | Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և ավտոմատացում | |
| Ե.13.01 | Կառավարում, կառավարման համակարգեր և դրանց տարրերը | Տեխնիկական |
| Ե.13.02 | Ավտոմատացման համակարգեր | Տեխնիկական |
| Ե.13.03 | Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, ցանցեր, դրանց տարրերը և սարքավորումները | Տեխնիկական |
| Ե.13.04 | Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում | Տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական |
| Ե.13.05 | Մաթեմատիկական մոդելավորում, թվային մեթոդներ և ծրագրերի համալիրներ | Տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական |
| Ե.14.00 | Էներգետիկա | |
| Ե.14.01 | Էներգետիկ համակարգեր, համալիրներ, էլեկտրակայաններ և դրանց կառավարումը | Տեխնիկական |

| | | |
|---|---|---|
| Ե.14.02 | Միջուկային էներգետիկ կայանքներ | Տեխնիկական |
| Ե.14.03 | Ջերմաէներգետիկա | Տեխնիկական |
| Ե.14.04 | Վերականգնվող և այլընտրանքային էներգիայի աղբյուրներով էներգետիկ կայանքներ | Տեխնիկական |
| Ե.20.00 | Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ | |
| Ե.20.01 | Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ | Տեխնիկական, գյուղատնտեսական |
| Ե.23.00 | Շինարարություն | |
| Ե.23.02 | Քաղաքացիական, արդյունաբերական, հիդրոտեխնիկական, տրանսպորտային և ստորգետնյա շինարարություն | Տեխնիկական |
| Ե.23.06 | Գեոդեզիա՝ ներառյալ քարտեզագրություն և կադաստր | Տեխնիկական, աշխարհագրական |
| Ե.27.00 | Էլեկտրոնիկա | |
| Ե.27.01 | Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա | Տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական |
| Զ.00.00 | Գյուղատնտեսական գիտություններ | |
| Զ.01.00 | Ագրոնոմիա | |
| Զ.01.01 | Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա | Գյուղատնտեսական, տեխնիկական |
| Զ.02.00 | Անասնաբուծություն | |
| Զ.02.01 | Գյուղատնտեսական կենդանիների բուծում. կերակրման և անասնաբուծության տեխնոլոգիա | Գյուղատնտեսական, կենսաբանական |
| ԺԴ.00.00 | Բժշկական գիտություններ | |
| ԺԴ.00.03 | Ներքին հիվանդություններ | Բժշկական |
| ԺԴ.00.04 | Սրտաբանություն | Բժշկական |
| ԺԴ.00.05 | Հիգիենա, մասնագիտական ախտաբանություն և թունաբանություն | Բժշկական, կենսաբանական |
| ԺԴ.00.06 | Մանկաբուժություն | Բժշկական |
| ԺԴ.00.07 | Նյարդաբանություն, հոգեբուժություն և թմրաբանություն | Բժշկական |
| ԺԴ.00.08 | Ուռուցքաբանություն | Բժշկական |
| ԺԴ.00.15 | Վիրաբուժություն | Բժշկական |

| | | |
|---|---|---|
| ԺԴ.00.16 | Համաճարակաբանություն | Բժշկական, կենսաբանական |
| ԺԴ.00.19 | Աչքի հիվանդություններ | Բժշկական |
| ԺԴ.00.20 | Անեսթեզիոլոգիա և վերակենդանացում | Բժշկական |
| ԺԶ.00.00 | Անասնաբուժական գիտություններ | |
| ԺԶ.00.01 | Անասնաբուժություն | Անասնաբուժական |
| ԺԷ.00.00 | Արվեստագիտություն | |
| ԺԷ.00.01 | Թատերական արվեստ. կինոարվեստ, հեռուստատեսություն | Արվեստագիտություն |
| ԺԷ.00.02 | Երաժշտական արվեստ | Արվեստագիտություն |
| ԺԷ.00.03 | Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն | Արվեստագիտություն |
| ԻԴ.00.00 | Գիտություններ Երկրի մասին | |
| ԻԴ.01.00 | Երկրաբանություն | |
| ԻԴ.00.01 | Ընդհանուր երկրաբանություն | Երկրաբանական, տեխնիկական |
| ԻԴ.01.08 | Երկրաֆիզիկա, օգտակար հանածոների որոնման մեթոդներ | Երկրաբանական, ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական |
| ԻԴ.02.00 | Ընդերքաբանություն | |
| ԻԴ.02.01 | Օգտակար հանածոների հանքավայրերի մշակում և շահագործում | Տեխնիկական |
| ԻԴ.02.03 | Օգտակար հանածոների հարստացում | Տեխնիկական, քիմիական |
| ԻԴ.03.00 | Աշխարհագրություն | |
| ԻԴ.03.01 | Աշխարհագրություն | Աշխարհագրական, երկրաբանական, տեխնիկական |